

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ ԵՎ ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՊՈՆԻԱՅՈՒՄ

Բ. Ժ. ԳԻՇՅԱՆ

Քանի որ ներկայումս թե՛ Ճապոնիայում և թե՛ Արևմտյան Եվրոպայում ու Հյուսիսային Ամերիկայում սոցիոլոգիական գրականության մեջ լայնորեն քննարկվում են նորագույն տեխնոլոգիաների և մտավոր առողջության ու բարոյական ճգնաժամի առնչությունները, ուստի ներկա հոդվածում փորձ է արվում Ճապոնիայում ինքնասպանությունների վերլուծության ճանապարհով բացահայտելու նորագույն տեխնոլոգիաների ազդեցության հետևանքով սոցիալական շփման փոփոխությունները:

Ճապոնիայի կառավարությունը հայտնում է, որ 2000-2005թթ. ավելի ու ավելի մեծաթիվ ճապոնացիներ են ինքնասպանություն գործել. «2003թ., նախորդ տարվա համեմատ, ինքնասպանությունների թիվն աճել է 7,1 %-ով և 2002 թվականի 32.143-ի փոխարեն արձանագրվել 34.427 ինքնասպանություն: Ինքնասպանությունը քաղցկեղից, սրտանոթային ու մի շարք այլ հիվանդություններից հետո վեցերորդ տեղում է մահվան պատճառների շարքում»: 2004-2005թթ. ևս ինքնասպանությունների թիվը գերազանցել է 30 հազարը: Համաձայն տարածված արևմտակենտրոն տեսակետի՝ 1990թ. սկիզբ առած տնտեսական անկումը շատերին է մղում վերջ տալու իրենց կյանքին:

Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը հրապարակել է իր թվերը, որոնք ներկայացնում են ինքնասպանության համեմատական մակարդակները, և որոնցում բարձր է համարվում յուրաքանչյուր 100.000 ազգաբնակչությանը բաժին ընկնող 13 ինքնասպանությունը: Նման երկրների մի մասը կենտրոնացած է Հյուսիսային Եվրոպայում, նրանց թվում են նախկին Խորհրդային Միության հյուսիսային հանրապետությունները: Այս երկրների շարքում են նաև Հարավային Կորեան, Ճապոնիան, Ավստրալիան և Նոր Զելանդիան²:

1990-2006թթ. աշխարհում ինքնասպանության ամենաբարձր մակարդակն է արձանագրվել նախկին Խորհրդային Միության հանրապետություններում³: Այսուհանդերձ, ինչպես նշում է «Ճապոնիայում ինքնասպանության

¹ «Japan's Record Suicide Rate». "The Sydney Morning Herald", Jun 11, 2004.

² Այդ մասին տե՛ս **World Health Organization**. Suicide Rates per 100,000 by Country, Year and Sex, (http://www.who.int/mental_health/prevention/suicide_rates/en/index.html), ինչպես նաև՝ **Kanako Amano**. An International Comparison and Analysis of Japan's High Suicide Rate. NLI Research Institute Report, Tokyo, September 6, 2005 (<http://www.nli-research.co.jp/english/socioeconomics/2005/li050906.pdf>):

³ Ըստ «Առողջապահության համաշխարհային կազմակերպության» նշված աղբյուրի՝ 2003թ. Հայաստանում յուրաքանչյուր 100.000 ազգաբնակչության հաշվով տղամարդկանց և կանանց ինքնասպանությունների թիվը համապատասխանաբար եղել է 3.5 և 1.7 մարդ:

բարձր մակարդակի միջազգային համեմատություն և վերլուծություն» ուսումնասիրությունը, «աննպատակահարմար է այս երկրների համեմատումը Ճապոնիայի հետ, քանի որ դրանք ունեն ճապոնիայից մեծապես տարբեր տնտեսական պայմաններ, ինչպես նաև ալկոհոլի օգտագործման հետևանքով մահվան դեպքերի բարձր հաճախականություն, որոնք առաջանում են ցուրտ կլիմայի և քաղաքական անկայունության հիմքի վրա»⁴: Մեթոդական առումով համեմատությունն ավելի ճշգրիտ կարող է լինել, եթե այն հիմնվի «Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության» (OECD) անդամ երկրների և «Առողջապահության համաշխարհային կազմակերպության» տվյալների վրա:

Համաձայն վերոնշյալ վիճակագրության՝ ծագող արևի երկրի յուրաքանչյուր 100.000 ազգաբնակչությանը բաժին է ընկնում 24.8 ինքնասպանություն, որը երկրորդն է Հունգարիայից հետո: Յուրաքանչյուր 100.000 ազգաբնակչությանը բաժին ընկնող ճապոնացի տղամարդկանց 35.2 ինքնասպանության մակարդակը ևս երկրորդն է նույն Հունգարիայից հետո, իսկ ճապոնուհիների 13.4 թիվն աշխարհում առաջինն է: Հասկանալի է, որ Ճապոնիայի ինքնասպանության ցուցանիշները բացառիկ են նույնիսկ «Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության» անդամ երկրների շարքում:

Վերջին տարիներին ճապոնական տնտեսությունը զարգանում է, և աճում է ապրանքների արտահանումն Ասիա, բայց այսպես կոչված «կորուսյալ տասնամյակը» (1990-2000) և տնտեսության անկումը հանգեցրել են գործազրկության աճին՝ շատերին զրկելով ապահով կենսակերպից:

Ինքնասպանությունների թվի համեմատություն՝ ըստ «Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության» անդամ երկրների (2003թ.)⁵

| Երկիր | 100.000 մարդուն բաժին ընկնող ինքնասպանությունների թիվը |
|------------------|--|
| 1 Հունգարիա | 32.6 |
| 2 Ճապոնիա | 24.8 |
| 3 Ֆինլանդիա | 23.4 |
| 4 Բելգիա | 21.3 |
| 5 Ըվեյցարիա | 20.2 |
| 6 Ավստրիա | 19.6 |
| 7 Ֆրանսիա | 18.0 |
| 8 Չեխիա | 16.1 |
| 9 Նոր Զելանդիա | 15.1 |
| 10 Լեհաստան | 15.0 |
| 11 Լյուքսեմբուրգ | 14.5 |
| 12 Դանիա | 14.4 |
| 13 Ըվեդիա | 13.9 |
| 14 Հարավ. Կորեա | 13.7 |

| Երկիր | 100.000 մարդուն բաժին ընկնող ինքնասպանությունների թիվը |
|----------------|--|
| 15 Գերմանիա | 13.6 |
| 16 Իռլանդիա | 13.4 |
| 17 Ավստրալիա | 13.1 |
| 18 Նորվեգիա | 12.4 |
| 19 Կանադա | 12.3 |
| 20 Իսլանդիա | 12.2 |
| 21 ԱՄՆ | 11.3 |
| 22 Հոլանդիա | 9.6 |
| 23 Իսպանիա | 8.3 |
| 24 Իտալիա | 7.8 |
| 25 Մեծ Բրիտ. | 7.5 |
| 26 Պորտուգալիա | 5.2 |
| 27 Հունաստան | 3.8 |
| 28 Մեքսիկա | 3.5 |

⁴ Kanako Amano, նշվ. աշխ., էջ 2:

⁵ Տվյալները ներկայացվում են ըստ «Առողջապահության համաշխարհային կազմակերպության» նշված աղբյուրի և Կանակո Ամանոյի հիշատակված զեկույցի:

Ինքնասպանությունների այս հզոր ալիքի մեջ ճապոնացիներին ու առաջին հերթին մասնագետներին ցնցել է թվային տեխնոլոգիաների դերը: Այս երևույթը լույս է սփռում բարգավաճ հասարակության մեջ զարգացման նոր ու մռայլ միտումների վրա. «Կյանքում անծանոթներն ինտերնետի օգնությամբ միանում են միասին մեռնելու համար», «թվային տեխնոլոգիաները դառնում են ինքնասպանության գործիք ճապոնիայում»: Մրանք են այն հիմնական եզրակացությունները, որոնք 2003-2006թթ. շրջանառվում են մասնագիտական հրապարակումներում ու զանգվածային տեղեկատվության միջոցներում:

Համատեղ ինքնասպանություն գործելու ինտերնետային պայմանավորվածությունները 1990-ական թթ. վերջերին սկզբնավորված երևույթ են: Թվային հաղորդակցության միջոցները և ինքնասպանությունն առաջին անգամ համատեղվեցին 1998թ. դեկտեմբերին, երբ քսանչորսամյա մի կին իրեն սպանեց ցիանիդով, որն ինտերնետի օգնությամբ ձեռք էր բերել դեղագործական փորձարարական ընկերության մի նախկին աշխատակցից: Իսկ Տոկիոյում բնակվող 34-ամյա մի ճապոնուհի 2004թ. սեպտեմբերին ինտերնետի օգնությամբ որոնեց ու գտավ վեց հոգու, որոնք բոլորն էլ փնտրում էին ինչ-որ մեկին խմբովին մեռնելու համար: Նրանցից չորսը քսանամյա երիտասարդներ էին, որոնք ապրում էին Տոկիոյից մոտ 500 կմ հեռու գտնվող Աոմորի, Օսակա և երկու անգամ ավելի հեռավորության վրա տեղավորված Սագա բնակավայրերում: Նրանք բոլորն էլ միմյանց անծանոթ էին ու օտար, բայց ինտերնետն օգնեց, որ գտնեն միմյանց, միանան ու ձևավորեն իրենց «ինքնասպանների համայնքը»:

«Ինքնասպանների համայնք» (suicide community) հասկացությունը ներկայումս շրջանառվում է ճապոնական մասնագիտական գրականության մեջ և զանգվածային տեղեկատվության միջոցներում: Այսպես է կոչվում ինտերնետային կայքերի օգնությամբ ինքնասպան լինելու համար միավորվող խումբը: Ինտերնետն օժանդակ միջոց է ու սովորաբար նրանք հանդիպում են ինքնասպանությունից կարճ ժամանակ առաջ: Չոհերը չունեն որևէ առնչություն միմյանց հետ՝ բացառությամբ թվային տեխնոլոգիաների օգնությամբ միմյանց հայտնաբերումը և համաձայնության կնքումը: Այն բանից հետո, երբ բոլոր մանրամասները համաձայնեցված են, խումբը հավաքվում է՝ «մեղսավոր» մտադրությունն իրագործելու:

Ճապոնիայում, որտեղ ինտերնետը մատչելի է ցանկացած մարդու, ինքնասպանների ինտերնետային համայնքի ձևավորումը դյուրին գործ է: Ինքնասպանության կայքերն ունեն «Ընդհատակյա ինքնասպանություն», «Վերջնագիծ», «Դու մտածում ես ինքնասպանության մասին» և նման այլ խորագրեր: «Ապահով հեռահաղորդակցություն» հասարակական կազմակերպությունը, որի տասը հազար կամավորներն ամբողջ աշխարհով մեկ ուսումնասիրում են ինտերնետային կայքերը, հաղորդում են, որ իրենք հայտնաբերել են ինքնասպանության բազմաթիվ ճապոնական կայքեր՝ ներառյալ այնպիսիները, որոնք խրախուսում են մահացու դեղաչափերի ընդունումը տեսախցիկների առաջ: Նրանք այդ մասին հաղորդում են ճապոնիայի իրավապահներին կամ ինտերնետային սպասարկումներ իրականացնողներին, որպեսզի դրանք հանեն, բայց դրանք ուղղակի ծղում են մեկ այլ տեղում:

Կայքերի մեջ հանգամանորեն ներկայացվում են ինքնասպանության ամենահարմար վայրերը: Ծապոնացի ինքնասպանները նախընտրում են այն անտառները, որտեղից բացվում է Ֆուժի լեռան՝ Ծապոնիայի ազգային խորհրդանիշի գմայլեի տեսարանը: Սա համընկնում է Մ. Իգայի այն տեսակետին, որ ճապոնացիներն ունեն այլ դիրքորոշումներ մահվան հանդեպ: Ինչպես նշում են Չ. Չանդլերը և Յանգ-Մեյ Ցայը, Մ. Իգան նկատի է առնում ճապոնացիների այն պատկերացումը, որ «մահն ազատագրում է, այն բարոյական է, ստեղծագործ է, գեղեցիկ է, ռոմանտիկ է և մարդու սխալների ներում է»⁶: Միևնույն ժամանակ, այլ փաստեր ևս վկայում են, որ ինքնասպանությունն այստեղ լայն հավանության է արժանանում, որ «ճապոնացի բարձր դասարանցիների մոտ 40 %-ը և քոլեջների ուսանողների 50 %-ը «մեռնելու ցանկություն» են հայտնում»⁷:

Թվային տեխնոլոգիաների օգնությամբ ինքնասպանությունները մեկ տոկոսից էլ փոքր են: Համաձայն Ծապոնիայի ազգային ոստիկանության վարչության՝ 2003թ. արձանագրվել է թվային տեխնոլոգիաների օգնությամբ ինքնասպանության տասներկու դեպք, իսկ ինտերնետի օգնությամբ իրենց կյանքին վերջ են տվել ընդամենը երեսունչորս հոգի: 2003թ. Ծապոնիայում ինքնասպանությունների ընդհանուր թիվը եղել է 34.427, որը նշանակում է, որ թվային տեխնոլոգիաներով ինքնասպանությունները կազմել են ընդամենը 0.09 տոկոսը: Սակայն նման դեպքերի աճը սպառնալի է. 2004թ. ինտերնետի օժանդակությամբ ինքնասպանությունները հասել են հիսունհինգի, իսկ 2005թ.՝ իննսունմեկի (տարեկան մոտ 60 % աճ):

Ոչ անհատական, այլ խմբովին ինքնասպան լինելու հանգամանքն անհանգստացնող է և Ծապոնիայում պատճառ է դարձել լայն քննարկումների: Իսկ ազգային ոստիկանության վարչությունը հայտնաբերել է, որ ինքնասպանության այս ձևն ընդօրինակում են շատերը, և վտանգ կա, որ հաջորդ ալիքն ավելի մեծ չափեր կընդգրկի:

Ծապոնական աղբյուրներն ընդգծում են, որ սա միայն Ծապոնիային բնորոշ երևույթ չէ, որ նման ինքնասպանություններ արձանագրվել են բարձր զարգացած այլ երկրներում: Մասնավորապես, 2005-2006 թթ. Մեծ Բրիտանիայում, Թայվանում և Հարավային Կորեայում արձանագրվել են թվային տեխնոլոգիաների օգնությամբ ինքնասպանությունների առաջին դեպքերը: Հետևաբար, համաձայն այս մոտեցման՝ ինտերնետի ու ինքնասպանության առնչությունը բնորոշ չէ միայն ճապոնական հասարակությանը:

Հասարակության մեջ աստիճանաբար արմատավորվում է այն մտայնությունը, որ «ինքնասպանություններն արագորեն դառնում են ճապոնացիների կողմից սիրված ազգային զվարճանք»: Այդ «զվարճանքին» 1998-2005 թթ. ընթացքում յուրաքանչյուր տարի տրվել են ավելի քան 30.000 մարդ: Ունանք էլ ինքնասպանությունների նման սպառնալից ցուցանիշները համարում են ժամանակակից հասարակության մեջ հենց թվային տեխնոլոգիաների հաճախակի օգտագործման արդյունք: Մաննոյի համալսարանի պրոֆեսոր Բ. Յասունոտոն նշում է. «Եթե մարդկանց հնարավորություն

⁶ Charles Chandler R. and Yung-Mei Tsai. Suicide in Japan and in the West. "International Journal of Comparative Sociology", XXXIV, 3-4, 1993, p. 246.

⁷ Նույն տեղում:

է տրվել գտնել ինչ-որ մեկին, որի հետ կարող են մեռնել, ապա, իմ կարծիքով, դա օգնում է կատարել վերջին քայլը»⁸: «Այն, ինչ ցնցող է խմբային վերջին ինքնասպանություններում, - գրում է «Ջըփան Թայմսը», - պատճառների բացակայությունն է: Պատճառները պարզ չեն՝ ո՛չ լքված սեր, ո՛չ աշխատանքի կորուստ և ո՛չ էլ սիրած մարդու մահ: Կարծես նրանք միասին ուղղակի մի կամուրջ են անցնում»⁹:

Ինքնասպանություն գործելու ինտերնետային համաձայնությունները բացահայտում են սոցիալական պրոբլեմներն ու մտավոր առողջության ճգնաժամն արևելասասիական այն երկրներում, որոնք արդիականացվում ու տնտեսական ծանր մրցակցության մեջ են մտնում Արևմուտքի հետ: Ճիշտ է, մասնագետներն իրականում թվային տեխնոլոգիաները չեն համարում խմբային ինքնասպանությունների պատճառ, բայց, այսուհանդերձ, այս տեխնոլոգիաներն օգնում են բացահայտելու ճապոնական հասարակությանը մտատանջող բարոյասոցիալական խնդիրները, այդ թվում՝ թվային տեխնոլոգիաների սոցիալական ազդեցությունն իր մշակութային ավանդույթներից ավելի ու ավելի օտարվող ճապոնական հետմոդեռնիստական հասարակության վրա:

Երիտասարդության շրջանում ինքնասպանության հնարավոր պատճառների շարքում առաջինը հիշատակվում է նրա սոցիալական օտարումը: Սովորաբար երիտասարդներն ունեն շատ լուրջ էմոցիոնալ խնդիրներ, որոնց էությունն այն է, որ նրանք դժվարանում են միմյանց հետ հաստատել միջանձնային մտերմիկ հարաբերություններ: Սա վախ է ուրիշների հետ սեփական զգացմունքներից խոսելու հանդեպ: Հնարավոր է, որ սա ճապոնական տիպի ավանդական էմոցիա է, որը նշանավոր ուսումնասիրող Ջորջ դը Վոսը ձևակերպում է որպես «սոցիալական դերի ու պարտքի զգացման հետ ճապոնացի անհատի իդենտիֆիկացիա»¹⁰: Երիտասարդները կարևորում են սոցիալական դերն ու պարտքի զգացումը և ունեն անձնական հարաբերություններ ձևավորելու դժվարություններ, այդ պատճառով էլ ձգտում են օգտագործել ինտերնետն իրենց զգացմունքներն արտահայտելու համար:

Ովքեր ինտերնետային կայքերում փնտրում են մեկին, որի հետ ցանկանում են ինքնասպան լինել, այն մարդիկ են, որոնք դեռ որոնում են իրենց խումբը, ցանկանում լինել խմբի անդամ՝ նույնիսկ մահվան պահին: Միայնակ ինքնասպան լինելը թվում է բավականին անհրապույր ու սխալական: Բայց երկուսով կամ ավելի մեծ խմբով ինքնասպան լինելը նրանց համար հանգստացնող ու խաղաղեցնող է:

«Ճապոնական սոցիոլոգիայի միջազգային ամսագիրը» արձանագրում է երիտասարդության շրջանում տարածում գտած մեկ այլ հիվանդագին ախտանիշ, որն անվանում է «հիկիկոմորի» (*hikikomori*)՝ հեռացում հասարակությունից¹¹: Դա հասարակությունից լքում ու ինքնամեկուսացում է,

⁸ Ryall Julian. Internet Suicide Pacts Shock Japan, *The Scotsman*, May 28, 2003.

⁹ Նույն տեղում:

¹⁰ Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս George De Vos. *Socialization for Achievement: Essays on the Cultural Psychology of the Japanese*. Berkeley and Los Angeles, 1973:

¹¹ Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Tatsushi Ogino. *Managing Categorization and Social Withdrawal in Japan: Rehabilitation Process in a Private Support Group for*

որ տևում է ամիսներ, իսկ երբեմն էլ տարիներ: Ամենից հաճախ հասարակությունը լքածները ծնողների հարևանությամբ փակվում են Տոկիոյի, Յոկոհամայի, Օսակայի կամ Ճապոնիայի մեկ այլ խոշոր կամ փոքր ուրբան կենտրոնի իրենց բնակարանի մի անկյունում: Որոշ գնահատումներով մոտ 1.2 միլիոն երիտասարդ կամ Ճապոնիայի ազգաբնակչության մոտ 1 %-ը հայտնվել է ինքնապարտադրված մեկուսացման այս վիճակում՝ դադարեցնելով շփումներն աշխարհի հետ և հազվադեպ հաղորդակցվելով նրանց հետ, ովքեր շրջապատում են իրենց:

Ճապոնիայում, նույնիսկ տանը փակվածների համար, ինտերնետը հաղորդակցման միջոց է: Հեռահաղորդակցության այս ձևից օգտվողների հսկայական թիվը ցույց է տալիս, որ Ճապոնիան աշխարհում ինտերնետով ամենահագեցած երկրներից է: Դրանից բացի՝ յուրաքանչյուր ճապոնացու բաժին է ընկնում 1.5 բջջային հեռախոս, այնպես որ գնացքները, առևտրի կենտրոններն ու դպրոցներն անվերջ բվվում են դրանց ազդանշաններից ու ստացվող հաղորդագրություններից: Թվային տեխնոլոգիաների օգնությամբ միշտ էլ կարելի է գտնել ընկերախումբ, ձևավորել համայնք: Բայց թվային հեռահաղորդակցության աշխարհն ունի իր ստորջրյա խութերը:

Միցուտ Օհիրան, մի փաստաբան, որը տասը տարեկանում ինքնասպան լինելու իր փորձերի մասին 2001թ. հրատարակել է հայտնի մի գիրք, անդրադառնում է թվային տեխնոլոգիաների ազդեցությանը երիտասարդության շրջանում: Համաձայն նրա՝ արդի հասարակությունում ինքն իրեն արտահայտելու անկարողությունը ճապոնացիների մեջ խորացրել է այն պատրանքը, թե իրենք զգացմունքներ են ունենում և ստեղծում են միջանձնային հարաբերություններ, երբ ինտերնետով հաղորդակցվում են անձանոթների հետ: Ինտերնետի թվային թագավորության մեջ շատ երիտասարդներ զգում են, որ իրենք կարող են բացվել ու արտահայտել իրենց զգացմունքներն անձանոթների առաջ, քանի որ, ըստ Մ. Օհիրայի, ամեն մեկն այստեղ «դիմագուրկ» է: Երիտասարդներն ինտերնետի թվային թագավորությունում արտահայտում են իրենց իրական մտքերը, և նրանց հետ հաղորդակցվողներն արձագանքում են նույն կերպ: Ու նրանց թվում է, թե իրենք, կյանքում առաջին անգամ, վերջապես, գտել են իրենց հոգու իսկական ընկերոջը: Բայց, դժբախտաբար, ըստ Մ. Օհիրայի, սա միայն պատրանք է¹²:

Խնդիրն անշուշտ չի վերաբերում միայն երիտասարդներին: Խորանում են մեկ տասնամյակ ձգված տնտեսական անկման հետևանքները, ընկերությունների վերակառուցումը տանում է աշխատանքի կորստի, սնանկացումներն աննախադեպ են բարգավաճ ժողովրդի կյանքում, որն ականատեսն է բարեկեցության հաստատուն աճին Երկրորդ համաշխարհային պատերազմին հաջորդած ժամանակաշրջանում:

2001 թ. միջին տարիքի մասնագետների ինքնասպանությունների բուռն աճի շրջանում ճապոնական կառավարությունն առաջին անգամ միջոցներ

Hikikomori.ans. "International Journal of Japanese Sociology", 2004, Number 13, 120-133:

¹² Մանրամասն տես Mitsuyo Ohira. So Can You. Kodansha International, Tokyo, 2001:

տրամադրեց ինքնասպանությունների կանխարգելման համար, իսկ 2006թ. հունիսին երկրի պառլամենտն ընդունեց «Ինքնասպանությունների կանխարգելման հիմնական օրենքը»: Ծարտարանները բարձր հարկերից մետվելը կանխելու համար քննարկում են բնակելի կառույցների նախագծերում փոփոխություններ կատարելու հարցը: Ստորգետնյա գնացքների կայարաններում հայտնվել են հատուկ հայելիներ և արգելապատնեշներ գնացքների գծերի վրա նետվելը խանգարելու համար: 1990-ական թթ. վերջերին կյանքի ապահովագրական ընկերությունները վերացրեցին կամ սկսեցին հետաձգել կյանքի ապահովագրման գումարների վճարումը, եթե մահվան պատճառը ինքնասպանությունն էր:

Ճապոնիայում մեծաթիվ ինքնասպանությունների (այդ թվում թվային տեխնոլոգիաների օգնությամբ) պատճառների որոնման ընթացքում անհնար է շանդրադառնալ սամուրայներին ու կամավոր մահվան մշակութային ժառանգությանը¹³, որը զովերգում է կամավոր ինքնամեկուսացումն ու ինքնամերժումը: Բայց տարածված արևմտակենտրոն վերլուծություններն արդի ինքնասպանությունների, ինչպես նաև թվային տեխնոլոգիաների ու ինքնասպանությունների առնչություններում ավելի ու ավելի դժվարությամբ են հայտնաբերում կամավոր մահվան մշակութային ժառանգությունը: Այդ ամենի մեջ ավելի շատ ակնհայտ է խուսանալումն ու փախուստը միայնությունից, մեկուսացվածությունից ու օտարումից: Կորե Աբեի «Ավագուտների կինը» վեպի «ամուլ ավագը» լավագույնս ներկայացնում է տնտեսական զարգացման, արևմտականացման, արդիականացման ու գիտատեխնիկական հեղափոխության ծնած բարոյական խաթարումն ու օտարումը: «Կինոխցիկը... դեսուդեն է ընկնում փողոցներում,-գրում է Կորե Աբեն,- սակայն միակ բանը, որ հաջողվում է որսալ՝ անհագուրդ ազահությունն է, կյանքի անողորմ վատնումը: Արտամոլորդ գազերի անհատակ մի ծով... , անթիվ-անհամար շինություններ..., սուրացող հրշեջ մեքենաներ..., զվարճության վայրերում և իջեցրած գներով ապրանքների վաճառատներում կուտակված հուսահատ ամբոխ..., անդադար հեռախոսային զանգեր ոստիկանական տեղամասերում..., հեռատեսիլային գովազդերի անվերջ ռոնդոներ...»¹⁴: «Ամուլ ավագը» հանգիստ չունի և անկատելի, բայց համառորեն մվաճում ու քայքայում է երկիրը: Իսկ վիատված մարդիկ օրըստօրե ավելի ու ավելի են փորձում կառչել միմյանցից:

Ինտերնետի օգնությամբ խմբային ինքնասպանությունների խնամքով նախապատրաստման հետևում թաքնված է խոր օտարումն ու մեկուսացումն Արևմուտքի հետ տնտեսական մրցակցության մեջ մտած մշտազբաղ հասարակությունում: Եվ համաձայն Ճապոնիայում լայն տարածում գտած մասնագիտական ու հասարակական կարծիքի՝ այն, որ մեզնիս ինքնասպանության գոհերն ինտերնետում իրենց մտադրության հայտարարումից հետո քաղաքավարությամբ արձագանքի են սպասել, շատ կարևոր է: Նկատի ունենալով այն վիճակը, որ նրանք սպասման մեջ են եղել, կարելի է եզրակացնել, որ սա ինքնասպանության նոր տեսակ է և տարբեր նրանից, ինչը հայտնի է եղել մինչ այժմ:

¹³ Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Բ. Ժ. Գիշյան, Կամավոր մահ. ճապոնացիների ազգային ինքնության քննություն, ԲԵՀ, 2003, թիվ 2, էջ 130-137:

¹⁴ Կորե Աբե, Երեք վեպ, Եր., 1985, էջ 392:

Б. Ж. ГИШЬЯН – *Новейшие технологии и самоубийство в Японии.* –

Среди стран-участниц «Организации экономического сотрудничества и развития» (OECD) в 1995-2006 гг. самый высокий уровень самоубийств зафиксирован в Венгрии и Японии. Внимание специалистов не могла не привлечь связь столь заметной волны самоубийств с интернетом, при посредстве которого формируются «клубы самоубийц». Факт сам по себе тревожный, широко обсуждающийся японской общественностью. Согласованные через интернет самоубийства вскрывают мучительные для японского общества нравственные и социальные проблемы, в частности, роль цифровых технологий во все большем и большем отчуждении от традиций национальной культуры в постмодернистскую эпоху.